



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՐԻՄՍԻԱՍՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻԱ ՄԻՐԱՆԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ**

Ուրբաթ, 26 Հոկտեմբերի յետմիջօրեին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Լուս Անճելըսի բաժանմունքի տնօրէն Տիկին Մարիա Միհրանեանի այցելութիւնը:

Տիկին Միհրանեան եկած էր Առաջնորդ Սրբազանին հաղորդելու ամիս մը ետք նախատեսուած Թելեթոնի նախապատրաստական աշխատանքներուն մասին: Ան յայտնեց, որ համաձայն տարիներու աւանդութեան, Թելեթոնը տեղի պիտի ունենայ Գոհաբանութեան տօնին օրը, Հինգշաբթի, 22 Նոյեմբերին, KCET կայանէն: Այս առիթով, կազմակերպուած է մեկնարկի ճաշկերոյթ-ընդունելութիւն մը, որ տեղի պիտի ունենայ 1 Նոյեմբերին, հիւրընկալութեամբ Տիար Արմէն Խաչատուրեանի եւ Տիկին Մարիա Միհրանեանի: Ներկայ պիտի ըլլայ Հայաստանի Սահմանադրական ատեանի նախագահ եւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի փոխ նախագահ Տիար Գագիկ Յարութիւնեան: Իսկ 18 Նոյեմբերին, տեղի պիտի ունենայ Հիմնադրամի տարեկան ճաշկերոյթը, Լուս Անճելըսի Օմնի պանդոկին մէջ. պատուոյ հիւրերը պիտի ըլլան Արցախի նախագահ Բազօ Սահակեան եւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի հայրենաշէն գործունեութիւնը, որուն մասնակից է ամբողջ հայութիւնը: Ան մաղթեց, որ յառաջիկայ Թելեթոնը Նոր յառաջխաղացք արձանագրէ բաղդատմամբ նախընթաց տարիներուն, այն համոզումով, որ Հայրենիքը կը պատկանի ողջ հայութեան ու անոր վերականգնումի աշխատանքին մասնակից պետք է ըլլան Հայաստանն ու Սփիւռքը՝ հաւասարապէս:

## **PRELATE WELCOMES ARMENIA FUND PRESIDENT MARIA MEHRANIAN TO THE PRELACY**

On the afternoon of Friday, October 26, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Armenia Fund President Maria Mehranian to the Prelacy. Mrs. Mehranian had come to the Prelacy to convey information to the Prelate regarding the planning of the annual Telethon which, in keeping with tradition, will take place on Thursday, November 22<sup>nd</sup>, Thanksgiving Day.

The annual gala is scheduled for Sunday, November 18, at the Omni Hotel in Los Angeles, with guest of honor H.E. Bako Sahakyan, President of the Republic of Nagorno Karabakh, and H.E. Vartan Oskanian, Foreign Affairs Minister of Armenia. On Thursday, November 1<sup>st</sup>, a pre-gala reception will take place hosted by Mr. Armen Khatchadourian and Mrs. Maria Mehranian. Among the guests who will be in attendance is the president of the Constitutional Court of Armenia and Vice-President of Armenia Fund International Mr. Gagik Harutyunyan.

During their meeting the Prelate highly commended the undertakings of Armenia Fund and wished unprecedented success for the Telethon, stressing that Armenia is the homeland of all Armenians and we must all participate in the rebuilding process.